

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԻՃԱԿԸ IV ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախաքրիստոնեական Հայաստանում հայտնաբերված գրավոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը թույլ է տալիս այսօր ուրախվել խոսքի և գրության հիմնական տեղաձիգի և ևս հիմնական տեղաձիգի գրաֆիկական կիրառության մասին:

Նյութական վկայությունների բացակայության հետևանքով այսօր դժվար է լիովին պարզել, թե ինչ իրադրություն էր տիրում Հայաստանի գրավոր մշակույթի ոլորտում քրիստոնեության պետական կրոնի հռչակման նախօրյակին, ուստի ստիպված ենք բավարարվել մատենագրական տեղեկություններով:

Դատելով պահպանված մատենագրական տեղեկություններից՝ Հայաստանի տաճարներում շարունակում էին կիրառվել հայալեզու մեծ հեռագրերը¹, իսկ թագավորական գրագրության ոլորտում քաղաքացիություն էր ստացել հունական այբուբենը²:

Քրիստոնեության պետականացումից հետո փոխվեց նաև Հայաստանի գրային իրավիճակը: Հայկական մեծ հեռագրությունը, որպես նախորդ կրոնի գրաֆիկական արժեք, արգելվեց և դուրս մղվեց կիրառությունից, իսկ առանձին մեծ հեռագրերը շարունակեցին կիրառվել հայ իրականության մեջ հմայագրերի, վարպետների նշանների և այլ գաղափարակիր-նշանների տեսքով («նշանագիրք իմաստեց» ցանկերը միջնադարյան մատյաններում, իմաստակիր նշանները կիրառական արվեստում և այլն)³:

Տրդատ III-ի հրամանով արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում հաստատվեցին հունարենն ու ասորերենը⁴: Հունարեն ու ասորերեն դպրության կնիքներն էին մնվեցին նաև Արշակ Բ-ի օրոք՝ Ներսես Մեծի նախաձեռնությամբ⁵:

360-ական թվականներին, Մովսես Խորենացու հաղորդման համաձայն, Մերութան Արծրունու կողմից հունարեն դպրության արգելման և պարսկերենի պարտադրման վարձ է արվում (գիրք Գ, գլ. ԼԶ), ինչը, սակայն, հաջողությամբ չի պսակվում:

Ղազար Փարպեցին հայտնում է, որ Վռամշապուհից առաջ՝ Խոսրով արքայի օրոք շարունակում էին տիրապետող դիրք ունենալ հունարենն ու ասորերենը. «Մանուկ հասակում, սովորելով, հունարեն դպրոթյունը, Մաշտոցը Հայոց արքա Խոսրովի արքունիքում: զինվորական ծառայության էր և կարգված արքունի մատենագիր դպիրների խմբի մեջ, քանի որ արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց թագավորների վճիռների ու հրովարտականքների գործը կատարում էին ասորերեն ու հունարեն լեզուներով... Եկեղեցական արարողությունները և Սուրբ Գրքի ըմբերումները Հայաստանի վանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն, որից ոչինչ չէին հասկանում. կամ. օգտվում. այսպիսի մեծ երկրի բնակիչները... Եվ երանելի այդ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ծայրով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ բազմության սրտերը»⁷:

Մովսես Խորենացին վկայում է նաև, որ Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Արևելյան Հայաստանի արքունիքում Վռամշապուհ արքայի օրոք կիրառվել է պարսկերենն՝ իր գրով. «... այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա (Վռամշապուհ արքան) ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում»⁸: Իսկ իր ապրած ժամանակի մասին Մովսես Խորենացին տեղեկացնում է. «... կային պարսից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, գյուղերի ու գավառների, յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի ու դաշինքների, մանավանդ, սեպուհական ազնվականության ծագման վերաբերյալ»⁹:

Համադրելով Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու տեղեկությունները՝ կարելի է եզրակացնել, որ քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման սպասարկման համար ասորերենի ու հունարենի գործածման Տրդատ Գ-ի սահմանած կարգը վտվտվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով դպրոթյուններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը: Այս իրավիճակում է, որ Մեսրոպ Մաշտոցի համեմատել գյուտով սկզբնավորվեց հայ մոր դպրոթյունը:

Հայ մատենագիրները տեղեկացնում են IV դարի Հայաստանում կոթողային արձանագրությունների մշակույթի առկայության մասին, ինչի ակունքները, հասկանալիորեն զալիս են նախաքրիստոնեական ժամանակաշրջանից¹⁰ և շարունակվում մաշտոցյան դպրոթյան առաջին իսկ դարում¹¹: Բերենք այդ մասին վկայություններ:

Չենոք Գլակի գրառմամբ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» էջերում պահպանվել են մեր նյութին առնչվող ուշագրավ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանում քրիստոնեությունը պետականացնելու դեպքերին: Հայոց վերջին՝ Արծան քրմապետի կողմնակիցների և նոր քրիստոնեացած թագավորի ու իշխանների ճակատամարտից հետո ընդհանուր թաղում կատարվեց և հուշարձան կանգնեցվեց զոհվածների հիշատակին, որին «ասորի և հելլենացի գրով և յոյն և յիսմայելացի նշանով» գրեցին հետևյալը. «Տեղի ունեցավ առաջին պատերազմը. այստեղ է հանգչում հույժ քաջամարտիկ Արծան քրմապետը, նրա հետ նաև հազար երեսուներ հոգի, որոնք կովեցին հանուն Գիսանե կուռքերի և հանուն Քրիստոսի»¹²:

Մերենոսին կից Ամանունի երկում հեղինակը վաղ շրջանի պատմության իր սկզբնաղբյուրների մասին հաղորդում է հետևյալը. «... Այնտեղ նայելով Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանը [այն արձանագրությունը], որ նա գտավ սյան վրա դրոշմված, Մծուրն քաղաքում, Սանատրուկ արքայի ապարանքում, արքունական տաճարի դռան հանդեպ, արքայական կայանի ավերակների տակ ծածկված, երբ որ այդ տաճարի սյուները պահանջեցին պարսից արքայի դուռը և երբ սյուների պատճառով քաջեցին ավերակները, հանդիպեցին արձանագրությանը՝ դրոշմված վեմի վրա՝ Հայոց և Պարթևաց հին թագավորների տարիները՝ հուռնարեն գրությամբ: Սա գտնելով Միջագետքում, նրա աշակերտների մոտ, կամեցա ձեզ պատմել, որովհետև սա ուներ այսպիսի վերնագիր՝ «Ես՝ Ազաթանգեղոս գրիչս, այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի Հայոց առաջին թագավորների տարիները՝ քաղելով քաջն Տրդատի հրամանով», որի պատճենը կտեսնես քիչ հետո, իր տեղում»¹³:

Գրային հուշարձանների մյուս խումբը, որ գոյություն է ունեցել IV դարում, կազմում են այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, չեն արգելվել նոր կրոնի քարոզիչների կողմից և հասել են մինչև V դար: Դրանցից, մասնավորապես, հիշատակելի են Մովսես Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրներից Մար Աբաս Կատինայի, Օղյունայ քրմի, Բարդաժանի աշխատությունները:

Հայագիտական ուսումնասիրություններում երկար քննարկումների առարկա է եղել (և շարունակում է մնալ) չորրորդ դարի օտարալեզու հայ գրականության խնդիրը, մատնանշվել են մի շարք աշխատություններ, որոնք, մեծագույն հավանականությամբ, պետք է ստեղծված լինեն IV դարում: Դրանք հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ են, որոնց ստեղծման անհրաժեշտությունը թելադրված էր նոր կրոնի քարոզչական-գաղափարախոսական պահանջներով: Մենք այստեղ կանգ չենք առնի այս հիմնահարցին, քանի որ վերջինս դեռ պետք է դառնա հատուկ

ուսումնասիրության առարկա, և կրավարարվեց միայն այն աշխատանքների թվարկումով, որոնց IV դարում ստեղծված լինելը, մեր կարծիքով, կասկած չի հարուցում: Մասնավորապես, լուրջ հիմքեր կան եզրակացնելու, որ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մի քանի հատվածներ (Գրիգոր Պարթևի վարքը, Խոսրովի և Տրդատի պատմությունը, Հովսիսիմյաց վկայաբանությունը) IV դարում գրվել են հունարեն, իսկ V-ում թարգմանվել և խմբագրվել, IV դարում ասորերենով պետք է գրված լինեին Ջենոբ Գլակի երկի մի քանի հատվածներ, մույն դարում հունարեն պետք է գրված լինեն հետագայում «Կանոնագիրք Հայոց» ներմուծված մի քանի հատվածներ («Կանոնք սրբոյն Գրիգորի Պարթևի... յաւելումն ի Նիկիական կանոն», «Կանոն Լուսաոռչին», «Սահմանադրութիւն կարգաց»-ի վաղ շերտերը, «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա», Վրթանես կաթողիկոսի և Երուսաղեմի Մակար հայրապետի թղթերը և այլն), Արտիթես եպիսկոպոսի պատասխան թուղթը Մարկոս միայնակյացին, որն օգտագործում է Մովսես Խորենացին իր երկրորդ գրքի 2 գլխում. «Հարցումն տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակյաց» բնագիրը, Աշտիշատի ժողովի կանոնները և այլն¹⁴:

Զորորդո դարի Հայաստանում ստեղծված գրային իրավիճակի մասին ուշագրավ երկու վարկած է առաջ քաշել Գ. Խ Սարգսյանը: Նա ընդունում է նախաքրիստոնեական Հայաստանում հայալեզու դպրության հնարավորությունը, ամգամ շուրջ 500-ամյա պատմագրական ամբողջատ ավանդույթի գոյությունը¹⁵ և կարծում, որ չորրորդ դարում ևս հայալեզու դպրությունը չի ընդհատվել, այլ արտահայտվել է հետերիոգրաֆիայի («այլալեզվագլտության») եղանակով: Վերջինիս համաձայն՝ օտարներից փոխառված գիրը կիրառվում էր բառերի մույն գծագրությամբ, սակայն կիրառողներն այն ընթերցում էին ոչ թե տվյալ գիրը ստեղծող ժողովրդի լեզվով, այլ իրենց լեզվի մույնմաստ բառով¹⁶: Տարիներ անց մա հանդես եկելով մոր տեսակետով: Ընդունելով քարոզչության ընթացքում սինքրոն թարգմանության կարևոր դերը՝ մա առաջ քաշեց IV դարի Հայաստանում մա հետերոէպիկայի («այլալեզվախոսության») առկայության հարցը, ինչը մասնակիորեն որոշ ժամանակ կարող էր բավարարել գրի պահանջը: Ընդ որում, հունարան և ասորաբան դպրոցների ծնունդը, Գ. Խ. Սարգսյանի կարծիքով, հայ իրականության մեջ կարող է կապվել IV դարի հետերոէպիկ ավանդույթի հետ¹⁷:

Հայագիտության մեջ շատ է արծարծվել օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյության խնդիրը: Առանց խորամուխ լինելու հարցի մեջ և վկայակոչելու այդ մասին եղած տվյալներն ու հայտնված կարծիքները¹⁸, այստեղ բավարարվեց միայն նշելով, որ թպետ տեսականորեն լիովին հնարավոր է նախամաշտոցյան Հայաստանում օտարագիր հայերեն գրության

գոյությունը, ներկայումս այդ մասին վկայող որևէ նյութական վկայություն չունենք (ինչպես որ չունենք նաև IV դարի հունարեն և ասորերեն ձեռագրեր կամ պատառիկներ, կոթողներ, հետերիոգրաֆիայի նմուշներ)...

Եվ վերջում մի շատ քննարկված, բայց պատասխան չգտած հարցի մասին:

Հինգերորդ դայում հանրահայտ էր, որ գոյություն են ունեցել հայկական գրեր, և Մեսրոպ Մաշտոցն իր այբուբենի գյուտից առաջ ջանացել է գտնել ու կիրառել դրանք. այդ են վկայում Կորյունը, Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին¹⁹: Ի՞նչ գրեր էին դրանք:

Թերևս կարելի էր ենթադրել, որ խոսքը վերաբերում է մեհենագրության մասին պահպանված հիշողությանը: Սակայն այն փաստը, որ մատենագիրները գործածում են «*ալփաբետների նշանագրեր*», «*տառերի նշանագրեր*» եզրերը, մղում է մտածելու, որ տեղեկությունները վերաբերում են ոչ թե բառա-վանկային մեհենագրական համակարգին, այլ այբուբենի: Այս դեպքում պետք է պատասխանել մեկ այլ հարցի՝ հնարավո՞ր է, արդյոք, IV դարում գոյություն ունեցած լինել հայկական այբուբեն: Փաստերի բացակայության պատճառով հարցին առայժմ հնարավոր չէ վերջնական պատասխան տալ՝ ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական: Սակայն արժե այստեղ հիշատակել հայագիտության մեջ գրեթե անուշադրության մատնված եթովպական ավանդադրույցը, որի համաձայն՝ Տրդատ Գ-ի օրոք երկու սրբակյաց հայեր՝ Թադեոսն ու Մարտիրոսը, ստեղծել են 24 տառանոց այբուբեն հայոց լեզվի համար²⁰: Թե ինչ է թաքնված այս ավանդության հետևում, մնում է հետագա ուսումնասիրության խնդիր: Այդուհանդերձ, մնան տեղեկության գոյությունը թույլ է տալիս ենթադրելու, որ Տրդատ Գ-ի օրոք կարող էր ստեղծվել այբուբեն հայերենի համար, իսկ թե ինչու դա չի պահպանվել, այդ մասին կարելի է անել միայն ենթադրություններ, այն էլ մեծ վերապահումներով...

Ամփոփելուց առաջ ընդգծենք, որ հինգերորդ դարում գրական հայերենի մշակվածության բարձր մակարդակը և գրաբարի բառապաշարը ևս վկայում են հոգուտ հայերենի՝ նախամաշտոցյան դարաշրջանում (ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ IV դարում) երկարատև գրավոր մշակման ենթարկված լինելու իրողության:

Այսպիսով տեսնում ենք, որ Հայաստանի IV դարի գրային իրավիճակն ուրվագծվում է հետևյալ կերպ.

1. Տրդատ Գ-ի հրամանով քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում գործածվում են հունարենը և ասորերենը՝ իրենց այբուբեններով:
2. Տրդատ Գ-ի սահմանած կարգը փոփոխվել է Խոսրով արքայի զահրըկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով

դպրություններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը:

3. Արքունի գրագրության գոյությունը ենթադրում է արքունական դիվանների գոյություն, որտեղ պետք է պահվեին արտաքին հարաբերություններին, պետական-իրավական ակտերին վերաբերող ե հասարակական կարևորություն ունեցող փաստաթղթեր:
4. Հուգևոր քարոզչության և կրթական ասպարեզների առկայությունն ինքնին ենթադրում է ուսումնական, գիտա-կրթական ձեռնարկների գոյությունը նշված լեզուներով:
5. Շարունակում են շրջանառության մեջ գտնվել այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են մախաբրիստոնեական ժամանակաշրջանում և չեն արգելվել մոր կրոնի քարոզիչների կողմից (մաս հասել են մինչև V դար):
6. IV դարի Հայաստանում առկա է կոթողային արձանագրությունների մշակույթը:
7. Նոր կրոնի քարոզչական-գաղափարախոսական պահանջներով պայմանավորված՝ ստեղծվում են հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ:
8. Լուրջ հիմքեր կան ենթադրելու IV դարի Հայաստանում հետերիոգրաֆիայի («այլալեզվագրության») և հետերոէպիկայի («այլալեզվախոսության») լայն կիրառության գոյությունը:
9. Չի կարելի բացառել օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյության հնարավորությունը:
10. Որոշակի վերապահումով, ելնելով եթովպական ավանդազրույցից, կարելի է ենթադրել, որ Տրդատ Գ-ի օրոք փարձ է արվել ստեղծելու այբուբեն հայերենի համար:

ARTAK MOVSISYAN

THE SITUATION OF WRITING CULTURE OF ARMENIA IN THE IV CENTURY

Under the king Trdat (Tiridates) III (298-330) the Christianity was adopted as a state religion, Armenian pre-Christian writing (*mehenagir*) was forbidden, after that Greek and Syrian became official languages of the Greater Armenia. Since 389 Pahlavic (middle Persian) became the official language in Eastern Armenia as well.

In article author shows the situation of writing culture in Armenia during the IV century, after adopting Christianity and before invention of alphabet by St. Mesrop Mashtotz.

1. Տեղածին գրահամակարգերն հն Հայաստանի վաղորդակցության գաղափարագրությունը, Հայաստանի գծային գիրը, Վանի թագավորության մեհենագրությունը, առեղծվածային հսկայանշանները և Հայաստանյան մոր սեպագիրը, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, ասուրա-բաբելական և Վանի թագավորության սեպագիր համակարգերը, արամեական և հունական այբուբենները (համգամանորեն տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 8-40, 50-170, 200-212):

2. Այդ են վկայում հայ և օտար մատենագիրների մի շարք տեղեկություններ: II-III դարերի հույն պատմագիր Փիլոստրատոսը «Ապոլոն Տիանացու վարքը» երկում հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա հայերեն տառերով գրված էր հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն», այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այս Արշակն այն ժամանակ հայոց թագավորն էր և իր բռնած հովազը այդ կենդանու մեծության պատճառով նվիրել էր Դիոնիսոսին: Դիոնիսոսը հնդկական Նյուսիայի պատճառով հնդկացիներից և արևելյան ժողովուրդներից կոչվում էր Նյոսոս» (Հարությունյան Ի., Հայոց գրերը, Թիֆլիս, 1892, էջ 252; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, I, Ե., 1981, էջ 619-620, թարգմ. Ի. Հարությունյանի): Խոսքն այստեղ 34-35 թվականներին թագավորած հայոց թագավոր Արշակ Ա-ի մասին է:

Մեկ այլ հույն պատմիչի՝ Հիպպոլիտի «Ժամանակագրության» մեջ, որը գրի է առնվել 234-235 թվականներին, սեփական դպրություն ունեցող ժողովուրդների մասին հաղորդվում է. «...ճրանք, որոնք ունեն դպրություն, հետևյալներն են. եբրայացիները, լատինացիները, որով և հռոմեացիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը» (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, I, Ե., 1981, էջ 621, թարգմ. Ա. Գ. Աբրահամյանի):

Նախամաշտոցյան Հայաստանում գրի ու գրականության երկարատև ավանդույթի գոյության ամենախոստում փաստը Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ պահպանված հաղորդումն է դպրության Տիր աստծո և նրա մեհյանի մասին. «Ապա ինքն իսկ (Տրդատ) թագավորը ամբողջ գործով հանդերձ Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը՝ ավերելու այնտեղ գտնվող Անահիտ դիցուհու բազիլն և այն, որ Երազմույն կոչված տեղեկում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմիզդի (Արամազդի) գրչի Դիվան կոչված երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծո ճարտարության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այնքանդեռ, այրել, ավերել» (Ազաթանգեղոս, Հայոց պատմություն (քնն. քննագիրը Գ.Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Ե., 1983, ՃԸ, 778): Տիր աստծո պաշտամունքը հայոց նախաքրիստոնեական դիցարանում լավագույնս վկայում է այդ դարաշրջանում մեր ժողովրդի՝ սեփական դպրություն ունե-

մալու մասին: Առանց դպրության, քնակամաբար, որևէ ժողովուրդ չէր կարող ունենալ դպրության աստծո պաշտամունք:

Ազաթանգեղոսի երկում հայտնվում է մասնախաքքիստոնեական Հայաստանում նշանագրերի գործածության մասին, որոնք մախամաշտոցյան հայ դպրության գոյության տեսակետի կողմնակիցները համարել են հայալեզու, հակառակորդները՝ այլալեզու: Առանց քննարկելու հայտնված կարծիքները՝ բերենք Ազաթանգեղոսի երկու վկայությունները. «Արդ՝ հրուսանն է հասել ինձ՝ Ազաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությանը, սովորել եմ լատիներենն (հռոմայերենն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ [մնացել] նշանագրերի արվեստին...» (Ազաթանգեղոս, Առաջաբան, 12) և «Այս ամենը (Գրիգորը) խոսեց այնպես կախված դրությամբ, և գրեցին նշանագրերի ատենակալ դպիրները... գրեցին ու մատուցեցին այն թագավորին...» (Ազաթանգեղոս, Ը, 99):

Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին: Դրանցից ամենավաղ շրջանին վերաբերողը կարելի է համարել Արամ նահապետի՝ արևմուտքում կատարած գործերի նկարագրությունը, երբ նա տիրելով Տիտանյանների նվաճած Սև և Միջերկրական ծովերի միջնատարածքին («զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտոն և զՈւկկիանոս»), հրամայեց տեղի քնակչությանը՝ «սովորել հայոց խոսքն ու լեզուն» («ուսանել գիտսս և զլեզուս հայկական»), տե՛ս Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց (աշխատությանը Մ. Արեղեան և Ս. Յարությունեան), Տփլիսի, 1913 (Նմանահանություն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Ե., 1991), գիրք Ա. զլ. ԺԴ): Հայոց լեզուն օտարներին սովորեցնելն, ինչ խոսք, հնարավոր էր միայն հայալեզու դպրության առկայության պայմաններում...

Պատմահոր մատյանում հիշվում է Բարդաժան պատմիչը (II-III դդ.), որը Հայաստան էր եկել քրիստոնեություն տարածելու, սակայն անհաջողությամբ էր մատմվել: Լինելով Դարանաղաց գավառի Անիի մեհենական արխիվում՝ նա «կարողաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը: Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանելով ասորերենի և ապա նրանից հունարենի» (Մովսես Խորենացի, գիրք Բ, զլ. ԿԶ): Գ. Խ. Սարգսյանը և, նրան հետևելով, Ա. Գ. Աբրահամյանը իրավացիորեն գտնում են, որ Անիում պահվող «մեհենական պատմության» սկզբնագրի լեզուն եղել է հայերենը (քացառվում են հունարենն ու ասորերենը, քանի որ Բարդաժանը այն թարգմանել է հենց այդ լեզուների, տե՛ս Սարգսյան Գ. Խ., Նախաձեռնարկայան շրջանի հայ պատմագրությունը, ՊԲՀ, 1969, N 1, էջ 124; Աբրահամյան Ա. Գ., Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Ե., 1982, էջ 96-98): Լիովին անհիմն են Է. Ա. Պիվազյանի և Լ. Գ. Խաչերյանի առարկումներն այդ կարծիքին, որոնք գտնում են, թե «մեհենական պատմության» լեզուն կարող էր լինել պարսկերենը (Պիվազյան Է. Ա., Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցի շուրջ, ՊԲՀ, 1962, N 4, էջ 158; Խաչերյան Լ. Գ., Հայ դպրութեան պատմությունը՝ քննական տեսությամբ, Խ. Ի, Հայ դպրութեան սկզբնաւորումը վաղմջական ժամանակներից մինչև հեթանոսական դարաշրջանի աւարտը (մ.թ.ա. VIII դ. - IV դ.

- մ.թ.), Ամթիվիա, 2000, էջ 178-179): Պարսկերենը Հայաստանում (այն էլ միայն Արևելյան) կիրառվել է միայն 389 թ. հետո, այդ մասին տե՛ս ստորև:
3. Հայկական թագավորությունների պաշտոնական գրագրության ոլորտում հունարենի և հունական այբուբենի կիրառման մասին տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի ..., էջ 111-163:
 4. Մովսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 129-142, 147-149:
 5. Ագաթանգեղոսի հաղորդման համաձայն, Տրդատ Գ-ն «Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց՝ իր իշխանության մահանգներից, գավառներից ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել... Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հեյլենական» Ագաթանգեղոս, ՃԻ, 840):
 6. Ներսես Մեծ կաթողիկոսի մախաձեռնությամբ կատարված քարենորոգումների շարքում հիշատակվում է «Հայաստանի բոլոր գավառներում հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ» հիմնելը (Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի), Ե., 1968, դպրություն Դ, գլ. Դ):
 7. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն (քնն. քննադիր Գ.Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուքաբյանի), Ե., 1982, դրվագ Ա, գլ. Ժ:
 8. Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ:
 9. Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Գ:
 10. Այդ մասին ունենք բազմաթիվ վկայություններ: Օրինակ՝ Տիգրան Բ-ի պատկերաքանդակով հունագիր մեծ կոթողը, որն անհետացել է 1869 թ. Տրապիզոնի անգլիական հյուպատոսի կողմից Բրիտանական թանգարան ուղարկվելուց հետո կամ ճանապարհին (Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի ..., էջ 117-118), Մովսես Խորենացու տեղեկություններն այն մասին, որ Մար Աբաս Կատիմայի հավաքած պատմության մի մասը Վաղարշակ արքան հրամայել է «արձանի վրա դրոշմել» (գիրք Ա, գլ. Թ), Վաղարշ Բ-ի որդի Խոսրով Ա-ն Կովկասյան լեռնականների դեմ իրականացրած վրիժառու արշավանքից հետո կանգնեցրել է հունալեզու կոթող (գիրք Բ, գլ. ԿԵ), Տրդատ Մեծի թողած «հեյլենացի գրով» արձանագրության մասին (գիրք Բ, գլ. Դ, քեպետ մեղկայումս ավելի ընդունված է Գառնիում թողած այդ արձանագրության հեղինակ համարել Տրդատ Ա-ին) և այլն:
 11. Դրա պերճախոս վկայությունն է Եղիշեի տեղեկությունը Ավարայրի ճակատամարտում զոհված հերոսների հիշատակին կանգնեցված գրակիր կոթողների մասին. «Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա» (Եղիշեի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ քաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Սիմասեան, Երևան, 1957, էջ 203):
 12. Ձեռք Գլակ Ասորի, Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Ձեռք Ասորի, Վենետիկ, 1889, էջ 31; Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Ե., 1889, էջ 41-42: Եթե ասորական և հունական գրերի կիրառությունը քրիստոնյա Հայաստանում հանրահայտ իրողություն է, ապա այս

տեղեկության մեջ անակնկալ է «խմայելացի», այսինքն՝ արարական մշանների գործածության վկայությունը, որը, հավանաբար, հետագա դարերի հավելում է, քանի որ արարներն իրենց մշակույթով, ինչպես հայտնի է, մեր տարածաշրջան են մտնող գործել հարյուրամյակներ հետո միայն... Գուցե կարելի է ենթադրել, որ սկզբնական բնագրում եղել է «խորայելացի», մանավանդ, որ երկաթագիր գրաբարում «մ» և «ր» տառերի գրությունը տարբերվում է ստորին մի մասնիկով:

13. Արգաշյան Գ., Սեբեոսի պատմությունը և Ամանունի առեղծվածը, Ե., 1965, էջ 31-33:
14. Տե՛ս Խաչիկյան Լ., Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով), (արտատպված՝ ՊԲՀ, 1973, N 3-ից), Աշխատություններ, հ. Ա., Ե., 1995, էջ 28-44 և հղված գրականությունը:
15. Սարգսյան Գ.Խ., Նախամեսրոպյան շրջանի ..., էջ 122-126:
16. Саркисян Г. Х., К предистории армянской письменности, «Հայ արվեստին մկրված միջազգային II սինպոզիում», Երևան, 1978, էջ 1-10 (նույնը՝ նաև ֆրանսերենը): Ուշագրավ այս վարկածը, սակայն, ցայսօր չի հաստատվել չորրորդ դարով թվագրվող որևէ հնագիտական փաստով:
17. Սարգսյան Գ.Խ., Հայոց գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի հայացքով, ՊԲՀ, 1990, N 4, էջ 22-30:
18. Դրանց մասին տե՛ս, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 460-673 (որ հեղինակն անհիմն է համարում օտարագիր հայերեն դպրության մասին տեսակետները): Արրահամյան Ա.Գ., Նախամշտոցյան հայ գիր ..., էջ 81-93 (հեղինակը գտնում է որ նախամշտոցյան Հայաստանում արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս գրել են օտար լեզուներով, իսկ ներքին կարիքների համար՝ հայերեն, բոլոր դեպքերում գործածելով օտար տառանիշները) և այլն:
19. Կորյունի հաղորդումից հասկացվում է, որ գործածությունից դուրս եկած հայկական գրերը գտել է Դանիել անունով ասորի եպիսկոպոսը. «Այն ժամանակ (Վտամշապուհ) արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի արվարետների նշանագրերը» (Կորյուն, Վարդ Ս. Մեսրոպ Մաշտոցի (աշխատությանը՝ Ա. Մաթևոսյանի), Ե., 1994, գլ. 2): Մովսես Խորենացին, անդրադառնալով նույն դրվագին, այդ գրերը կոչում է «զվաղնշուցն գտեալ / գրեալ նշանագիր տառից» (գիրք Բ, գլ. ԿԶ; ձեռագրերը պահպանել են և՛ «գտեալ», և՛ «գրեալ» տարբերակները (տե՛ս Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, 1913 (1991), էջ 326): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախնական բնագրում պետք է լիներ «գտեալ», տե՛ս, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, էջ 107-108): Նույնն է հավաստում Ղազար Փարպեցին. «Եվ երանելի այդ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մտրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ քաղմության սրտերը» (դրվագ Ա, գլ. Ժ): Այն բանից հետո, երբ հանդգնեցին, որ այդ նշանագրերը քավական չեն հայերենի հնչյունական

ողջ հարստությունը ճշգրիտ հաղորդելու համար, Մաշտոցն իր աշակերտներով գնաց Միջագետք՝ նույն Դանիելի մոտ՝ գտնելու պակասող տառերը, քայքայ չգտնելով իր ականակածը՝ շարունակեց պրպտումները, ինչի արդյունքը եղավ հանճարեղ գյուտը...

20. Տաղավարյան Ն., Ծագումն հայ տառից, Վիեննա, 1895, տե՛ս հավելիսը: